ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

"Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին" արձանագրության վավերացման նպատակահարմարության վերաբերյալ

Արձանագրությունն ստորագրվել է հիմք ընդունելով 2013թ. դեկտեմբերի 2-ի՝ "Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի բնագավառում համագործակցության մասին" համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 10-րդ հոդվածը:

Արձանագրությունն ստորագրվել է 2018 թվականի դեկտեմբերի 27-ին լիազորագրերի հիման վրա ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի կողմից և Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի կողմից:

Արձանագրությամբ նախատեսվում է փոփոխություններ մտցնել Համաձայնագրում և դրա Հավելված՝ Հրահանգում, որով սահմանվում է զինվորական սուրհանդակափոստային կապի ցանցով զինվորական նամակագրության առաքման կարգը:

Արձանագրությամբ փոփոխություն է կատարվում Համաձայնագրի 3-րդ հոդվածում, որի համաձայն Կողմերը նշանակում են լիազոր մարմիններ.

Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը և Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը:

Արձանագրությամբ կատարվող փոփոխությունների նպատակն է հստակեցնել և ավելի դյուրին դարձնել Համաձայնագրի իրագործումը: Փոփոխությունները կապված են այն բանի հետ, որ ՀՀ և ՌԴ միջև չկա մաքսային սահմաններ:

Արձանագրությունը ամրագրում և Համաձայնագրով սահմանված կարգով ձևակերպում է Համաձայնագրում կատարվող փոփոխությունները:

Հաշվի առնելով վերոնշյալը նաև այն, որ Համաձայնագրով նախատեսված է փոփոխությունների մասին արձանագրությունները պետք է ուժի մեջ մտնեն նույն ընթացակարգով /ԱԺ վավերացմամբ/, ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել Արձանագրության վավերացման նպատակով սահմանված ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար

Դ.ՏՈՆՈՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր,

2013թ. դեկտեմբերի 2-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) 10-րդ հոդվածին համապատասխան,

նկատի ունենալով 2014թ. մայիսի 29-ի՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը և 2014թ. հոկտեմբերի 10-ի՝ Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին պայմանագիրը,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությամբ.

«սուրհանդակներ (ցրիչներ և թղթատարներ) - Կողմի լիազոր մարմնի պաշտոնատար անձինք, ովքեր, այդ Կողմի պետության օրենսդրությանը համապատասխան, իրականացնում են զինվորական նամակագրության առաքման պարտականությունները:»:

Հոդված 2

Համաձայնագրի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 3

Սույն Համաձայնագրի իրականացման համար Կողմերի պետությունների լիազոր մարմիններն են՝

Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը,

Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը:

Կողմերն իրենց լիազոր մարմինների փոփոխության մասին միմյանց ծանուցում են դիվանագիտական ուղիներով:»:

Հոդված 3

Համաձայնագրի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերությամբ.

«Կողմերի պետությունների լիազոր մարմինների փոխադարձ պայմանավորվածությամբ՝ մի Կողմի՝ մյուս Կողմի պետության զորամասերին և կազմակերպություններին հասցեագրված զինվորական նամակագրության առաքումը կարող է իրականացվել այդ մյուս Կողմի զինվորական սուրհանդակափոստային կապի ցանցի միջոցով՝ սեփական զինվորական նամակագրության առաքման համար սահմանված կանոններով:»:

Հոդված 4

Համաձայնագրի 5-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն Համաձայնագրին համապատասխան առաքվող զինվորական նամակագրությունն անձեռնմխելի է և չի կարող ո՛չ բացվել, ո՛չ պահվել:

Այն Կողմի պետության սահմանապահ մարմինները, որի տարածք առաքվում է զինվորական նամակագրությունը, ապահովում են սուրհանդակների (ցրիչների և թղթատարների)՝ պետական սահմանի անարգել հատումը սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթեր ներկայացնելու դեպքում, ինչպես նաև ցուցաբերում են աջակցություն զինվորական նամակագրության օպերատիվ առաքման կազմակերպմանը և անհրաժեշտ օգնություն նրանց կողմից իրենց իրավասության շրջանակներում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս:»:

Հոդված 5

Համաձայնագրի 6-րդ հոդվածի երկրորդ և վեցերորդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6

1. Համաձայնագրի հավելվածի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Չի թույլատրվում այնպիսի զինվորական նամակագրության առաքումը, որի պարունակությունն այն Կողմի պետության օրենսդրության համաձայն, որտեղ իրականացվում է առաքումը, դասվում է արգելված վտանգավոր բեռների և իրերի (այդ թվում՝ զենքի, թմրանյութի և դրանց կիրառման ու պատրաստման հարմարանքների) շարքին»:

2. Համաձայնագրի հավելվածի 9-րդ կետում հանել «, ինչպես նաև լիազոր մարմինների կողմից տրված հաշվեցուցակային զենքի վերաբերյալ տվյալներ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին Համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն» բառերը:

Հոդված 7

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2018 թ. դեկտեմբերի 27-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝	**Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. դեկտեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում» փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պ/կ՝

Տիգրան Գալստյան

ПРОТОКОЛ

между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о внесении изменений в Соглашение между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о сотрудничестве в области военной фельдъегерско-почтовой связи

Правительство Республики Армения и Правительство Российской Федерации, именуемые в дальнейшем Сторонами,

в соответствии со статьей 10 Соглашения между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о сотрудничестве в области военной фельдъегерско-почтовой связи от 2 декабря 2013 г. (далее – Соглашение),

принимая во внимание Договор о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 г. и Договор о присоединении Республики Армения к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 г., подписанный 10 октября 2014 г.,

согласились о нижеследующем:

Статья 1

Статью 2 Соглашения дополнить абзацем следующего содержания:

"фельдъегеря (курьеры и нарочные)" - должностные лица уполномоченного органа Стороны, которые в соответствии с законодательством государства этой Стороны исполняют обязанности по доставке воинской корреспонденции.".

Статья 2

Статью 3 Соглашения изложить в следующей редакции:

"Статья 3

Уполномоченными органами государств Сторон, ответственными за реализацию настоящего Соглашения, являются:

от Армянской Стороны – Министерство обороны Республики Армения;

от Российской Стороны – Министерство обороны Российской Федерации.

Об изменении уполномоченных органов Стороны уведомляют друг друга по дипломатическим каналам.".

Статья 3

Статью 4 Соглашения дополнить абзацем следующего содержания:

"По взаимной договоренности уполномоченных органов государств Сторон доставка воинской корреспонденции одной Стороны, адресованной воинским частям и организациям государства другой Стороны, может осуществляться по сети военной фельдъегерско-почтовой связи этой другой Стороны по правилам, установленным для доставки собственной воинской корреспонденции.".

Статья 4

Абзацы первый и второй статьи 5 Соглашения изложить в следующей редакции:

"Воинская корреспонденция, доставляемая в соответствии с настоящим Соглашением, является неприкосновенной и не подлежит ни вскрытию, ни задержанию.

Пограничные органы государства Стороны, на территорию которого доставляется воинская корреспонденция, обеспечивают фельдъегерям (курьерам и нарочным) при предъявлении ими документов, предусмотренных статьей 6 настоящего Соглашения, беспрепятственное пересечение государственной границы и оказывают содействие в организации оперативной доставки воинской корреспонденции и необходимую помощь при выполнении ими своих служебных обязанностей в пределах своей компетенции.".

Статья 5

Абзацы второй и шестой статьи 6 Соглашения признать утратившими силу.

Статья 6

1. Пункт 8 приложения к Соглашению изложить в следующей редакции:

"8. Не допускается доставка воинской корреспонденции, содержимое которой относится к опасным грузам и веществам (в том числе оружия, наркотиков и приспособлений для их применения и изготовления),

запрещенным законодательством государства Стороны, в которое осуществляется доставка.".

2. В пункте 9 приложения к Соглашению слова ", а также сведения о табельном оружии, предоставленные уполномоченными органами в соответствии со статьей 6 Соглашения между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о сотрудничестве в области военной фельдъегерско-почтовой связи" исключить.

Статья 7

Настоящий Протокол вступает в силу в порядке, предусмотренном статьей 10 Соглашения.

Совершено в г. Москве «27» декабря 2018 г. в двух экземплярах, каждый на армянском и русском языках, при этом оба текста имеют одинаковую силу.

За Правительство Республики Армения	**За Правительство Российской Федерации**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄԵ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2018թ. դեկտեմբերի 27-ին ստորագրված ,Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ ,Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրումե փոփոխություններ կատարելու մասինե արձանագրության նպատակն է կատարել փոփոխություններ 2013թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրում՝ լրացնելով հոդվածներ համաձայնագրի իրականացման համար Կողմերի իրավասու մարմինների և զինվորական նամակագրության առաքման ընթացակարգերի վերաբերյալ դրույթներով, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել Համաձայնագրի 6-րդ հոդվածի երկրորդ և վեցերորդ պարբերությունները:

2013թ. դեկտեմբերի 2-ին ստորագրված ,Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասինե համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2015թ. մարտի 6-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2018թ. դեկտեմբերի 27-ին ստորագրված ,Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ ,Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրումե փոփոխություններ կատարելու մասինե արձանագրության հաստատումը կամ վավերացումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

?????? ????????
Feb 7 2019 12:06 PM

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում» փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը ստորագրվել է 2018թ. դեկտեմբերի 27-ին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի կողմից:

Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից՝ համաձայն Համաձայնագրի 10-րդ հոդվածի դրույթների:

2019թ. փետրվարի 7-ի դրությամբ ռուսական կողմից չի ստացվել ծանուցում՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու վերաբերյալ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ**